

ք. Երևան

«01» 07 2020թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի Արթուր Սողոմոնյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Արևիվ ՄՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Սեյախյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ և Մեղրի համայնքների չգազաֆիկացված տարածքների գազաֆիկացման» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է 240 օր՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների համար:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել նրաշփոթային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների **100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, զործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեոուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 6 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 201,451,800 (երկու հարյուր մեկ միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որից 33,575,300 (երեսուներեք միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար երեք հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 128,941,560 (հարյուր քսանութ միլիոն ինը հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ որից 21,490,260 (քսանմեկ միլիոն չորս հարյուր ինսուն հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

3-րդ չափաբաժին 72,510,240 (յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր տասը հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ որից 12,085,040 (տասներկու միլիոն ութսունհինգ հազար քառասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:<sup>29</sup>

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 50,362,950 (հիսուն միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:<sup>30</sup>

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսերին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>31</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

<sup>29</sup> Եթե Կապալառուի կողմից գնախն արտասուտ նկատառումն է առաջա ԱԱՀ-ն, ապա ասումանագրո նմանու սուս կետո հանում են տոնո — I — I ՀՀ

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուս ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուսի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուսի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուսի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառուս կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուսի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուս:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 28 էջից, կերպվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՑԻՆ ԿԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման  
հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,

Կ.Ուլենցու 31


ՀՎՀՀ 00846441

Հ/Հ՝ 900018007527

Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն

Արթուր Աղոյանյան



/ստորագրություն/

ԿՏ



### ԿԱՊԱԼԱՌՈՒ

Արևիկ ՍՊԸ

Հասցե՝ Մարզ Արարատ, համայնք  
Մասիս-Ռանչպար խճղ 3 Մայաթ-Նովա

ՀՎՀՀ 00110978

Հ/հ՝ 115000714333380

Բանկ <<ՀԱՅԲԻՅՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ



**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ՝  
«ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԶԳԱՋԱՖԻԿԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ  
ԳԱՋԱՖԻԿԱՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Հ/Հ	№№ նախահաշվի և հաշվարկի	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը, հազար դրամ	Գինը, հազար դրամ
1	2	3	4	5	6	7
1	<b>1. Միջին ճնշման գազատար</b>					
1	1-990	Փոսերի քանդում Vp կարգի գրունտներում հարվածահատ մուրճով մետաղական հենասյունների համար	մ <sup>3</sup>	14.1	2.400	33.840
2	1-965	Փոսերի քանդում III կարգի գրունտներում ձեռքով մետաղական հենասյունների համար	մ <sup>3</sup>	0.3	4.800	1.440
3	1-966	Փոսերի քանդում IV կարգի գրունտներում ձեռքով մետաղական հենասյունների համար	մ <sup>3</sup>	0.3	4.800	1.440
4	1-969	Խրամուղու ետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	0.7	3.000	2.100
5	6-13	Բետոնե հիմքեր միաձույլ բետոնից B12.5 (M150) մետաղական հենասյունների համար	մ <sup>3</sup>	17.0	52.800	897.600
6	1-723-71	Ավելորդ գրունտի բարձում ինքնաթափ, ձեռքով	մ <sup>3</sup>	208.2	3.000	624.600
7	Γ III	Տեղափոխում 5 կմ	տն	490.6	1.350	662.310
8	9-153	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից 2 խողովակների համար d=108x3.5մմ	կգ	495.4	0.570	282.378
9	9-153	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից 2 խողովակների համար d=76x3մմ	կգ	855.9	0.570	487.863
10	9-153	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից d=89x3.5մմ	կգ	88.6	0.570	50.502
11	9-153	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից d=76x3մմ	կգ	307.8	0.570	175.446
12	9-153	Անշարժ հենարանների տեղադրում	կգ	117	0.570	66.918
13	9-153	Կիսախողովակների տեղադրում գազախողովակների տակ	կգ	51.9	0.570	29.583
14	1	Պարոնիտի տեղադրում	կգ	4.3	1.900	8.170
15	13-121 r-2	Հենասյունների և գազատարի մակերևույթների նախաներկում ΓՓ -021 2 շերտով	մ <sup>2</sup>	220	0.280	61.600
16	15-613	Հենասյունների և գազատարի յուղաներկում երկու անգամ	մ <sup>2</sup>	220	1.150	253.000
17	6-83	Մետաղական շինվածքների տեղադրում հենարանների հիմքերի համար (ամրան A-III դասի)	կգ	23.0	0.430	9.890
18	22-88	Պողպատե գազատար խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով Ø108x4մմ	մ	9	6.200	55.800
19	22-87	Պողպատե գազատար խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով Ø89x4մմ	մ	196	5.000	980.000
20	22-86	Պողպատե գազատար խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով Ø57x3.5մմ	մ	490	3.450	1690.500

21	22-86	Պողպատե գազատար d-40մ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով	մ	140	2.850	399.000
22	22-362	Ձևավոր մասերի տեղադրում (արմունկ, եռաբաշխիչ, անցում, խցափակիչ)	կգ	78.5	0.800	62.800
23	25-392	Գազատարի փչանաքրում	զմ	699	0.150	104.850
24	1-1551	Գրունտի քանդում III կարգի գրունտներում էրկավատորով	մ³	400.2	1.150	460.230
25	1-1552	Գրունտի քանդում IV կարգի գրունտներում էրկավատորով	մ³	155	1.350	209.250
26	1-962	Խրամուղու քանդում IV կարգի գրունտներում ձեռքով	մ³	4.2	4.800	20.160
27	1-991	Խրամուղու քանդում V կարգի գրունտներում հարվածահատ մուրճով	մ³	140.9	6.200	873.580
28	1-1635	Խրամուղու ետլիցք III կարգի գրունտներում բուլդոզերով	մ³	49.6	0.750	37.200
29	1-969	Խրամուղու ետլիցք III կարգի գրունտներում ձեռքով	մ³	15.2	3.000	45.600
30	23-1	Խողովակների ավագե նստաշերտի 0.1մ պատրաստում և ծածկում 0.2մ ձեռքով	մ³	184.2	6.200	1142.040
31	1-1150	Գրունտի տոփանում մեխանիզմով	մ³	2.5	0.570	1.425
32	Рынок	Ասֆալտի կտրում (երկու կողմից)	զմ	18.0	0.280	5.040
33	27-33	Ասֆալտի քանդում 0.1մ	մ³	0.80	9.550	7.640
34	27-32	Խճի նստաշերտի քանդում 0.16մ	մ³	1.30	1.450	1.885
35	27-42	Խճի նստաշերտի ստեղծում 16 սմ հաստությամբ	մ²	8.00	1.450	11.600
36	27-164b	Ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում՝ մանրահատիկ խառնուրդից 4 սմ	մ²	8.00	4.000	32.000
37	27-164a27-165a	Ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում՝ խոշորահատիկ խառնուրդից 6 սմ	մ²	8.00	6.700	53.600
38	24-02-034-01	ՊԷ խողովակի d-90x5.2մ SDR-17,6 ПЭ 100 տեղադրում խրամուղում	զմ	776.0	3.150	2444.400
39	24-02-004-02	ՊԷ խողովակի d-90մ մեխանիկական կտրում	հատ	3	0.480	1.440
40	24-02-003-02	ՊԷ խողովակի d-90մ ծայրերի ուղղում	հատ	128	0.480	61.440
41	24-02-002-03	ՊԷ խողովակի d-90մ կցորդային միացություն	հատ	7	0.750	5.250
42		ՊԷ խողովակի ծախսը հեռադակների համար d-90	զճ	1.0	0.950	0.950
43	24-02-001-02	ՊԷ խողովակի d-90մ կցմանքային գոդում	հատ	56	1.450	81.200
44	ՍՍԳ-12 տաճ. 7, սր. 5	ՊԷ խողովակների գոդակարերի ուլտրաձայնային ստուգում	հատ	58	5.700	330.600
45	8-141-1	Պղնձե լարի տեղադրում 2.5մմ²	մ	770	0.430	331.100
46	Рынок	Բացահայտիչ ժապավենի փոում	մ	761	0.090	68.490
47	22-89	Պողպատե պատյանի տեղադրում խրամուղում Ø 133x4մմ	մ	35.0	8.100	283.500
48	22-239	Ստորգետնյա պողպատե պատյանի մեկուսացում ամրանավորված մածիկային ժապավենով d-125 մմ	մ	35.0	3.350	117.250
49	24-02-031-02	ՊԷ խողովակի d-90մ անցկացում պատյանով	զմ	32	3.250	104.000
50	24-02-005-03	d-90մ ՊԷ 90° անկյունակի տեղադրում (ներդիր տաքաց.)	հատ	3.0	1.450	4.350
51	24-02-121-02	Գույքային հանգուցի տեղադրում	հատ	1.00	81.000	81.000

52	24-02-120-02	ՍՅ խողովակների փչամաքրում	մ	961.0	0.150	144.150
53	24-02-122-02	ՍՅ խողովակների փորձարկման համար ճնշման բարձրացում	մ	961.0	0.090	86.490
54	24-02-124-01	ՍՅ խողովակների փորձարկման համար ճնշման պահում	տեղ	1.0	14.300	14.300
55	22-87	Պողպատե զագատար խողովակների տեղադրում փորձարկումով Ø89x4մմ	մ	4	4.950	19.800
56	22-237	Ստորգետնյա պողպատե խողովակների մեկուսացում ամրանավորված մածիկային ժապավենով dպ-80 մմ	մ	4	2.300	9.200
57	22-511 r-0,15 որմ.	Պողպատե պատյանի ծայրերի հերմետիկացում բխումով	հատ	2	0.950	1.900
58	22-511 r-0,15 որմ.	Պողպատե պատյանի ծայրերի հերմետիկացում փրփրային լցանյութով	տեղ	3	1.050	3.150
59	25-473	Ջողակարերի ստուգում ֆիզիկական եղանակով	հատ	4	2.400	9.600
60	25-497	Տարբերիչ նշանի տեղադրում	հատ	2	4.800	9.600
61	24-398	Ստուգիչ խողովակի տեղադրում d-32մմ	հատ	3.0	3.050	9.150
62	22-384	Սողակային փականի 30x41ռոչ տեղադրում 80մմ հակադարձ կցաշուրթով	հատ	1.0	49.700	49.700
63	22-383	Սողակային փականի 30x41ռոչ տեղադրում 50մմ հակադարձ կցաշուրթով	հատ	1.0	33.400	33.400
64	19-41	Ճնշման կարգավորիչի GS-64-22 տեղադրում	հատ	1.0	90.700	90.700
2	2. Ցածր ճնշման զագատար					
1	Рынок	Ասֆալտի կտրում	զմ	1350.0	0.280	378.000
2	27-33	Ասֆալտի քանդում	մ <sup>3</sup>	16.70	9.550	159.485
3	1-965	Փոսերի քանդում III կարգի գրունտներում ձեռքով մետաղական հենասյունների համար	մ <sup>3</sup>	93.4	4.800	448.320
4	1-966	Փոսերի քանդում IV կարգի գրունտներում ձեռքով մետաղական հենասյունների համար	մ <sup>3</sup>	149.1	4.800	715.680
5	1-990	Փոսերի քանդում Vp կարգի գրունտներում հարվածահատ մուրճով մետաղական հենասյունների համար	մ <sup>3</sup>	27.3	6.200	169.260
6	6-13	Բետոնե հիմքեր միաձույլ բետոնից B12.5 (M150) մետաղական հենասյունների համար	մ <sup>3</sup>	266.1	52.800	14050.080
7	1-723-71	Ավելորդ գրունտի բարձում ինքնաթափ, ձեռքով	մ <sup>3</sup>	266.1	3.000	798.300
8	Г III	Տեղափոխում 5 կմ	տն	518.8	1.350	700.380
9	9-153	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից d=133x3.5մմ	կգ	2579.1	0.570	1470.087
10	9-153	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից d=108x3.5մմ	կգ	1634.3	0.570	931.551
11	9-153	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից d=89x3.5մմ	կգ	5227.6	0.570	2979.732
12	9-153	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից d=76x3մմ	կգ	4366.4	0.570	2488.848
13	9-153	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից d=57x3մմ	կգ	9399.6	0.570	5357.772
14	9-153	Անշարժ հենարանների տեղադրում	կգ	2593	0.570	1478.124
15	9-153	Կիսախողովակների տեղադրում զագախողովակների	կգ	835.9	0.570	476.463

		տակ				
16	1	Պարոնիտի տեղադրում	կգ	103.2	1.900	196.080
17	13-121 r-2	Հևնապունների և գազատարի մակերևույթների նախաներկում ΓΦ -021 2 շերտով	մ <sup>2</sup>	3102	0.280	868.560
18	15-613	Հևնապունների և գազատարի յուղաներկում երկու անգամ	մ <sup>2</sup>	3102	1.150	3567.300
19	20-696	Մետաղական շինվածքների տեղադրում պատերից ամրացման համար (ամրան)	կգ	276.0	0.430	118.680
20	22-90	Պողպատե գազատար խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով Ø159x4.5մմ	մ	30	10.000	300.000
21	22-89	Պողպատե գազատար խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով Ø133x4մմ	մ	374	8.100	3029.400
22	22-88	Պողպատե գազատար խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով Ø108x4մմ	մ	670	6.200	4154.000
23	22-87	Պողպատե գազատար խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով Ø89x4մմ	մ	1406	4.950	6959.700
24	22-87	Պողպատե գազատար խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով Ø76x3.5մմ	մ	250	4.500	1125.000
25	22-86	Պողպատե գազատար խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով Ø57x3.5մմ	մ	5964	3.450	20575.800
26	22-86	Պողպատե գազատար d-40մմ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով	մ	275	2.850	783.750
27	22-86	Պողպատե գազատար d-32մմ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով	մ	245	2.700	661.500
28	22-86	Պողպատե գազատար d-25մմ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով	մ	57	2.400	136.800
29	22-362	Ձևավոր մասերի տեղադրում (արմունկ, եռաբաշխիչ, անցում, խցավակիչ)	կգ	647.8	0.790	511.762
30	25-392	Գազատարի փչամաքրում	զմ	9411	0.150	1411.650
3	<b>3. Բազմաբնակարանային շենքերի գազաֆիկացում</b>					
1	22-86	Պողպատե գազատար d-40մմ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով <i>/Չարենց փողոցի № 21 բազմաբնակարանային շենքի գազաֆիկացում/</i>	մ	2.4	2.850	6.840
2	22-86	Պողպատե գազատար d-32մմ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով	մ	44.2	2.700	119.340
3	22-86	Պողպատե գազատար d-25մմ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով	մ	35.2	2.400	84.480
4	22-86	Պողպատե գազատար d-20մմ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով	մ	18.0	2.300	41.400
5	22-362	Ձևավոր մասերի տեղադրում (արմունկ, խցավակիչ)	կգ	8.8	0.790	6.928
6	46-53	Պատերում անցքերի բացում D-50մմ	հատ	3	0.950	2.850
7	46-55	Միջհարկային հարթակներում անցքերի բացում D-30մմ	հատ	9	0.760	6.840
8	46-22	Անցքերի սվաղում ցեմենտավազե շաղախով	մ <sup>3</sup>	1.2	30.600	36.720
9	22-86	Պողպատե պատյանի տեղադրում Ø 57x3.5մմ	մ	4.5	2.700	12.150
10	22-383	Գեղային փականի տեղադրում 40մմ տրամաչափի	հատ	1	8.600	8.600
11	22-383	Գեղային փականի տեղադրում 32մմ տրամաչափի	հատ	4	7.150	28.600
12	20-696	Մետաղական շինվածքների տեղադրում պատերից ամրացման համար (ամրան)	կգ	6.0	0.430	2.580
13	13-121 r-2	Գազատարի մակերևույթների նախաներկում ΓΦ -021 2 շերտով	մ <sup>2</sup>	16.7	0.280	4.676
14	15-613	Գազատարի յուղաներկում երկու անգամ	մ <sup>2</sup>	16.7	1.150	19.205
15	25-392	Գազատարի փչամաքրում	զմ	100.1	0.150	15.015

16	16-51 քում.	Խողովակի միացում Dպ-32մմ	հատ	5	1.450	7.250
17	20-527	Դեֆլեկտորի տեղադրում D-400մմ	հատ	3	28.650	85.950
18	20-415	Մետաղական շերտափեղկ	հատ	6	38.200	229.200
19	1-966	Փոսերի բանդում IV կարգի գրունտներում ձեռքով մետաղական հեռասյունների համար <i>/Մսենդի տեղադրման աշխատանքներ/</i>	մ <sup>3</sup>	0.35	4.800	1.680
20	6-13	Բետոնե հիմքեր միաձուլ բետոնից B12.5 (M150) մետաղական հեռասյունների համար	մ <sup>3</sup>	0.35	52.800	18.480
21	9-1	Պողպատե անկյունակ 63x63x6մմ	տն	0.0600	114.600	6.876
22	Рынок	Պողպատե անկյունակի արժեքը 63x63x6մմ	գմ	104.00	4.100	426.400
23	9-153	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից d=89x3.5մմ	կգ	5.4	0.570	3.078
24	22-86	Պողպատե գազատար d-40մմ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով <i>/Չարենց փողոցի № 22 բազմաբնակարանային շենքի գազաֆիկացում/</i>	մ	14.0	2.850	39.900
25	22-86	Պողպատե գազատար d-32մմ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով	մ	43.0	2.700	116.100
26	22-86	Պողպատե գազատար d-25մմ խողովակների վերգետնյա տեղադրում փորձարկումով	մ	50.0	2.400	120.000
